

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լրրուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.  
ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ не менѣе десяти разъ, дѣлается уступка 50%.  
Плата впередъ.  
За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубля.  
На первой страницѣ „Мшака“ никакія постороннія объявленія не печатаются.  
Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

### ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բրդի առևտուրը Նու-  
խում. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—  
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ  
ԼՈՒԲԵՐ.—ՀԵՌԱՎԻՆԵՐ.—ԲՕՐԱՍ.—ՊԱՏԱՍԻՍԱՆ-  
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.  
«Հանդէս ամսօրհայ»

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԲՐԴԻ ԱՌԵՆՏՈՒՄ ԴՈՒՍՈՒՄ

Ամենայն օր շարունակ Նուխում վաճառական-  
ները արտնջում են, թէ առևտուրը քե ս ա տ է,  
Մասկուլում թեյի, մետաքսի գործը ավող չէ,  
Մարտիում բոժոժի գործը վատ է, բրդի քաշը  
պակաս է գալիս, ֆրիգոնը, ֆրիգոնէտը վնաս է  
անում և այլն:

Հետաքրքրական է իմանալ թէ ինչով է առաջ-  
նորոգում անդադար տրտու՞յ յայտնող մեր առև-  
տրականը իր ձեռնարկութեան մէջ, թէ որպիսի  
ղիք է բռնում նա ապրանք դնելու և վաճառու-  
ւու գործի վերաբերութեամբ:

Վերջինքը բրդի առևտուրը ինչպէս անցեալ  
յօդուածում յիշել էի, մեր առևտրականը զարնա-  
նը և աշնան 3,000—4,000 ռուբլի—առանց որ  
և է վկայագրի—յանձնելով լէզլի կամ թուրք  
կ օ մ ի ս ա չ ի ն ե ռ ի՝ ուղարկում է շրջակայ

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### «ՀԱՆԳԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ»

Տեղական մամուլը հաղորդեց արդէն, որ Վե-  
րինայի Միսիթարեան Հայերը «Հ ա ն դ է ս Ա մ-  
օ ր Ե ա յ» անուամբ մի ամսաթիւր են սկսած  
հրատարակել ներկայ 1887 ամի յունվարից: Ա-  
ւելող չնք համարում մեր կողմից թի քանի  
խօսք ասել այդ նոր հրատարակութեան մասին և  
ծանօթացնել ընթերցող հասարակութեանը նորա  
բովանդակութեան և ուղղութեան հետ:

Չէ կարելի՞ ուրախութիւն չարտայայտել, որ  
վիեննական Միսիթարեան միաբանութիւնն ևս  
ժամանակի պահանջմանց անտարբեր չը կենա-  
լով, ինքամիտ ձեռնարկու է եղել սոյն պար-  
բերական հրատարակութեանը թոյս է յայտնում  
«Հ ա ն դ է ս Ա մ օ ր Ե ա յ» համետ կերպա-  
րանք, յողջոյն կը մատչի Ազգին, սերով պիտի դիմա-  
ւորվի ընդհանրութեանը, և մենք վստահ ենք, որ  
հայ հասարակութիւնը կը ջանայ արգարացնել  
վեր. Հայերի այդ յոյսն, որի անկեղծութեան  
վերա կարելի չէ կասկած ունենալ:

Հաստատված Եւրօպայի կենտրոնում, քաղաքա-  
կրթութեան սրտում իր տեղը դրած, վիեննա-  
կան Միսիթարեան Միաբանութիւնը ձեռնարկել է  
հրատարակել մի ամսօրհայ թիւրթ «Ազգին մտա-  
ւոր և բարոյական հարստութիւնն յաճախելու»  
նպատակով: Այնպէս զարգացնելով իր շնորհ, նը-  
պատակն ընտիր, գործիչները կարող և ընդու-  
նակ, ուրեմն ամենայն վստահութեամբ կարելի է  
նայել այդ նոր ամսագրի յաջողութեան:

զիւղերը բուրգ ժողովուրդ է Վերջիններն էլ 50-ա-  
կան, 100-ական ռուբլի վաղորօք բաժանելով ա-  
մենայն միջոց գործ են դնում մեծ քանակու-  
թեամբ բուրգ ժողովուրդ, որովհետեւ դնած իրա-  
քանչիւր պուրի համար 20 կ. վարձ են ստա-  
նում, կ օ մ ի ս ա ն են առնում: Մրցութիւնը  
կատարել կերպով սկսվում է. բուրգ առնող-  
ները 10—20 կովտայինները դիմում են իրանց  
ձարակութեանը և հարազատութեանը: Նոյն իսկ  
մի և նոյն առևտրականի համար բուրգ ժողովուրդ  
կովտայինները միմեանց դէմ ամեն տեսակ խա-  
ղախութիւններ գործ են դնում: Սոցա կատարել  
և անմիտ մրցութիւնից օգտվում են ոչխարատէ-  
րերը: Որպէս զի բրդի քաշը ծանրանայ, նրանք  
ոչխարների խուզիքը թողնում են անձրեային և  
դանակներին:

Եթէ պատահում է, որ այդ միջոցներում անձ-  
րե չէ գալիս, օգտվում են ցողից: Նոյն քան  
խուզիքը, ոչխարին առաւօտները ցողով ծածկված  
խոտերի վրա այս և այն կողմի վրա շուռ են  
տալիս և ապա խուզում ու անմիջապէս փաթա-  
թում: Նա անգամ այդպէս բուրգը խոնաւեցնե-  
լուց յետոյ, ոչխարին տանում են հերկված տեղի  
վրա պարկեցնում և այնպէս խուզում, որպէս զի  
խուզված բուրգը փաթաթելով հողախառն փա-  
թաթով, հողին էլ երբեմն փոխարինում է նոյն իսկ  
ոչխարների աղբը... Խուզելու ժամանակ եթէ  
բուրգ ժողովուրդ կովտայինը ներկայ չեն լինում  
անմիջապէս չեն ստանում, այն ժամանակ հոր

«Հանդէս» ասպարէզ է կենում մի ոտանաւոր  
«Հրախիւնաց սղջոնով առ Ազգին Հայոց», որ  
թերթի ասպարէզ գործունէութիւնը պարզելով  
հրախիւնում է հայ հասարակութեան հաշտ աչքն և  
ուշադրութիւնը իր վրա: Ըստ ծրագրին «Հանդէսը»  
պիտի ունենայ Ուսումնական, Արտեստագիտա-  
կան կամ Տնտեսական և Բարոյական բաժին-  
ներ:

Յունվարի և փետրվարի համարների ուսու-  
ման կ'ան բաժինը բովանդակում է հետեւեալ  
յօդուածները:

1) Լ ու ս ո յ և ջ ե ռ մ ու լ է ա ն է ու-  
թ ի լ ը ը, որ խօսում է լուսոյ էութեան և  
ազդեցութեան վերա և բովանդակում է այդ  
մասին նորագոյն բնագիտական հետազոտու-  
թեանց արդիւնքը:

2) Ս ք ա ն չ և լ ի ք Յ ու ս ո յ, մի ընդհատ-  
մական հայեացք, որ հետաքրքիր տեղեկութիւն-  
ներ է պարունակում Յուսոյ յատկութեանց մա-  
սին:

3) Պ ե ռ ս ե պ ո լ ս ո յ ս ե պ ա զ ի ը ը: Այս  
ընդարձակ յօդուածը, որ դեռ շարունակվում է,  
մի հնախօսական ակնարկ է ս ե պ ա զ ի ը ը ե ռ ի  
վերա: Այդտեղ մենք տեղեկանում ենք սեպա-  
ղոց գիւտի և մեխութեան և այդ մասին դեռ  
նախանայ նորագոյն քննութեանը:

4) Ի ն ա կ ա ն ե լ ա ռ ու կ ա ն ի ա ն  
ք ու ն մի հետաքրքիր յօդուած, որ միանդամայն  
առողջապահութեան վերաբերեալ կարեւոր տեղե-  
կութիւններ է բովանդակում:  
Այս և սրջ նման յօդուածներին դուրս ունանք այն-  
քան կարեւորութիւն չը տալով կասնել թէ մեր հասա-  
րակութեան համար այնքան օգտակար չեն բայց  
մենք, ընդհակառակը, կարծում ենք, թէ ընդհան-  
րապէս ուսումնական յօդուածները մեծ նշանա-  
կութիւն ունին մեզ համար: Ամեն ոք կը խոտոտ-  
վանի թէ դեռ ևս կանուխ է մեր մէջ երևումն

են փորում, ցնում մէջը և ապա կոխտում.  
անձրե գալուց էլ հորի բերանը բաց են անում  
որ ուրիշ ժամանակ ծածկած է լինում: Այնպէս  
բերը այդպիսի միջոցները սովորական են համա-  
րում...  
Կովտային էլ իրանց կողմից, հակառակ մի-  
մեանց, ճիգն են թափում, որպէս զի մի հար-  
քով կարողանան աղայի նշանակած ճից պուրի  
մի բան աւել տալ և շ ա տ ա ու ն ե լ. այս դե-  
տաւորութեամբ նրանք յաճախ դիմում է աղա-  
յին:

—Ազն, դուք թէ և իրաւունք էիք տուել պուր-  
մինչև 3 ը. առնել, բայց այդ գնով չեն տալիս  
լաւը. չէ կարելի մի բան աւելացնել: Ազն ան-  
միջապէս պատասխանել դժուարանում է. պա-  
տասխանը վարկան է թողնում: Մի քանի րօպէ  
չանցած արան մի կտոր թուղթ ձեռքին դէս ու-  
ղէն է դնում, և դիմում է առաջին պատահող  
ծանօթին ասելով. «Վէլ հեռագիր գրիւ ինձ հա-  
մար. գրիւ Մարտէ մեր կովտայիններին, թի՛ղ շու-  
տով այնտեղի բրդի դրութիւնը մեզ յայտնէ. կա-  
րելի է արե՞ծք այստեղ 3 ը. 50 կ. ուլ առնել»:  
Ստացվում է հեռագրի պատասխանը: «Բրդի պա-  
հանջ կայ, այս օրերս վաճառեցի 140 հակ-  
առէք մինչև 4 ըուբլի»:  
Թէ որքան հիմնա-  
ւոր են լինում կովտայինների կնիքագրութիւնները  
և թէ որքան իրաւացի նրա հաղորդածը, այդ  
զգաւորիք է մտում... Միայն իրողութիւնը այն է,  
որ երբ հեռագրի հիման վրա արան շտապում է  
չատ բուրգ ժողովուրդ տալ, երբ լէզլի կովտային  
յետ է ուղարկում՝ 3 ը. 50 կ. ուլ առնելու իրա-  
ւունքը տալով և արդէն այն ժամանակ երբ  
յայտնում են կովտայիններին թէ բաւական քանա-  
կութեամբ բուրգ է ժողովված, այդ ժամանակվա-  
նից սկսած՝ քիչ-քիչ լավում են անախորժ լուրեր  
Մարտէի բրդի առևտրի մասին: Նախակ նամակի  
ետեից դրում են կովտայինները, թէ այս տարի  
սպասածից շատ բուրգ է ստացվել տեղս, առև-  
տուր չը կայ, յոյս չունեն և այլն: Վերջապէս  
բրդի պատրաստի հակերը ձանապարհ են դրում

այնպիսի թերթի, որոնք նպատակ ունենային  
հասարակութեան ճ ա շ ա կ ը կրթելու և որոնք  
այս կամ այն մասնագիտական ձևով զարգաց-  
ման առաջնորդէին: Մեր հասարակութեան հա-  
մար հրատարակված մի ամսաթիւրթ պէտք  
է ի հարկէ բազմակողմանի երևոյթ ունենայ:  
Մեր հասարակութիւնը դեռ մեծաւ մասամբ  
զուրկ է նոյն իսկ տարրական ուսումնարից, գի-  
տութեան այս կամ այն ձևով հմտութիւնից,  
ուրեմն հարկաւոր է, մի օրգան, որ լրացնէ  
հասարակութեան այդ անհրաժեշտ պիտոյը:  
որ ծանօթացնէ նորան գիտութեան քանա-  
ղան ձևերի ծանօթ կամ նորագիտ արդեանց  
և մտաւոր պաշար պատրաստէ կամ աւելացնէ  
նորա համար: Եւ այդ պաշտօնը կատարելու հա-  
մար ամենամեծ յարմարութիւն ունի մի թիւրթ,  
որ հրատարակվում է այդ հմտութեանց կենտրո-  
նում, որ իր ընթերցողներին ծառաւոր յարեցնելու  
համար իր ստիճողը ցնում է ուղղակի աղբիւրից,  
և որի կրթողական և ուսուցանողական յօդուած-  
ները հիմնվում են գիտութեան վերջին, ճշգրտոյն  
եղբայրացութեան վերա: Չը մտանանք յիշել, որ  
այս պարագայն մի մասնաւոր, ուշադրութեան  
արժանի կէտ էլ ունի, որի վերա առանձին մը-  
տադրութիւն և հօգացողութիւն հարկ է ունենալ:  
Այնքան, պէտք է մատակարարել այնպիսի սը-  
նուղ, որ համապատասխան լինի ընթերցող հա-  
սարակութեան ընդհանրութեան ըն ա կ ա ն պա-  
հանջին, հարկաւոր է, որքան կարելի է, զգուշա-  
նայ այնպիսի հմտութիւններ աւանդելուց, որոնք  
կամ անժամանակ լինելով և կամ անմարտի,—  
փոխանակ կրթիչը և ուսուցանելու արես միտ-  
քը—պատճառ էլ լինեն նորա բիթնաւորն: Սա-  
կայն մենք վստահ ենք, որ Տ. Ստրանինի հսկո-  
ղութեան ներքե հրատարակող թիւրթը պատշա-  
ճաւոր ուշադրութիւն կը նուրթէ այս կէտին:  
Ընդհանուր ուսումնական յօդուածները յետոյ

դէպի Մարտէ: Ազն անհանգիստ է. զիւր-ցերեկ  
հանգստութիւն չունի:

Այսպէս երկար տանջվելուց յետոյ, վերջապէս  
ստանում է հեռագիր.—«Վսխտակ բուրգը 87, և  
մոխրագոյնը 56 ամառ. ուղում են. ծախեմ թէ  
չէ. աւելով ծախելու յոյս չը կայ. պատասխանե-  
ցէք»:  
Ազն իր բաղը անիծելով վերցնում է  
համբը. «չըրթ»-«չըրթ»-«չըրթ» հն, լաւ. էլի  
քիչ մնասով ենք պրծնում. պուրի 15 կ. ենք  
մնասով: Հեռագրի է տալիս. որ ծախի: Որո-  
շեալ ժամանակից յետոյ, ստանում է կարմիր դը-  
ծերով գեղեցիկ հաշիւը: Պուրի 15 կ. հաշած  
մնասը այժմ դուրս է գալիս 1 ը.—արան մնում  
է դարձացած: Կարծելով թէ դուժարն է սիւալ  
դուրս բերված, ինչ ասես, որ չէ դնում որդմով  
համբը: Վերջին վերջապէս նկատվում է, որ  
այստեղի մէկ պուրգ բուրգը Մարտէում 30—32  
ֆունտ է դարձել... Պատճառը ակնհայտ է: Բուրգ  
ժողովուրդ կովտայինը սովորաբար աշխատում են  
բուրգը զիւղերից քաղաք տեղափոխել այնպիսի  
ժամանակ, երբ անձրե է գալիս: Քասկները (մէ-  
չօկները) դարձում են սաչկուտ և օրերով սպա-  
սում. անձրե սկսվելուն պէս՝ լծում են սաչկերը  
և ձանապարհ ընկնում: Այս սովորական երևոյթ  
է: Այդ պատճառով աղային և կովտային մէջ ան-  
բաւականութիւնը անպակաս է լինում. անբաւա-  
կանութիւնը վերջանում է նրանով, որ կամ իւ-  
րաքանչիւր թրջված միջոցին 10 ֆունտ դուրս է  
գալիս քաշից թացութեան ժամանակ և կամ ըս-  
տացվում է այն քաշով, ինչ քաշի հաշիւ. որ  
կազմած է լինում նախօրէն կովտային իր ա-  
ռածի քանակութեան վերաբերեալ: Սակայն այդ  
նախօրէն կազմած հաշիւն է պուրիով կեղծ-  
ված է լինում. փոխանակ 500 պուրգ, որ առ-  
ված է լինում, հաշիւը 600—700 պուրգ է կազ-  
մում: Փորձը նրան կովտային վարեցրել է  
այսպիսի դէպքերի համար. նա առաջուց կարո-  
ղանում է իմանալ, թէ դուժարում, թրջվելուց  
յետոյ, որքան կարող է աւելանալ...  
Մասամբ կովտայինների շահախիտութիւնը, մա-

«Հանդէսը» մեծ տեղ է տալիս հայոց լեզուի, դը-  
րականութեան զարգացման վերաբերեալ հարցե-  
րին: Նա տեղեկացնում է մեզ եւրօպայի և աղ-  
զային նշանաւոր հայագիտաց երկաւորութեանց  
մեր լեզուի և գրականութեան մասին, և առող-  
ջաբաւ խորհրդածութիւններով ցոյց է տալիս  
մեզ նոցա դիտական արժանիքը: Այսպէս յուն-  
վարի համարում մենք գտնում ենք:

«Հ ի ն դ ե ը ր ո ղ դ ա թ ու չ ո ղ ս հ ա յ պ ա տ-  
մ ա դ ը ու լ է ա ն յ ժ ա մ ա ն ա կ ե ը » մի  
ուսումնական հետազոտութիւն մեր դիտական,  
Հ. Յովս. վ. Գալթընեանի, որ մանրակրկիտ քնն-  
ութեամբ սրտում է ա. Կորինի, Ե. Խորենացոյ,  
Գ. Նյուլի և Գ. Պարպեցոյ պատմագրութեանց  
թուականները, յիշատակութիւններ յառաջ բերե-  
լով այդ առթիւ և Գր. խալիկեանից (Ղազար  
Պարպեցի և Գործք նորին, Մտուա 1883):

Բ. համարում տրված են յօդուածներ.  
«Յ. Հ ա ն ու լ լ է հ ն ա յ լ հ ա յ ա ղ է տ և  
կ ա լ ի ց ի ո յ Հ ա յ ո յ Գ ա լ ա լ և լ զ ու լ ը »:  
Այդ յօդուածից ծանօթանում ենք որ նշանա-  
ւոր դիտականը, որ իր հայագիտութիւնը մե-  
ծաւ մասամբ պարտական է Վիեննայի Միսի-  
թարեաններին, «Հայերն լեզուն հնդեւրօպական  
նախաղիզուի զլսուտը բարբառներով մինչ» է  
համարում, այնպիսի ուլ զլսուտը բարբառների  
ե ռ կ ը ր ո ղ ը յ յ ի ն լ լ լ ա ղ մ ա ի ն հ ա յ ա ղ է ս  
պ թ է ս օ ղ Հ ի ը ը յ մ ի ն, Բրուզմանի և այլոց հնդե-  
ւրօպական վրա: Խօսելով տաճկահայոց և ուս-  
տահայոց արտասանութեան մասին, ընդունում  
է յարկելի գիտականը, որ «Բ ու ս ա հ ա յ ո յ  
ա ը տ ա ս ա ն ու լ է ը ն ը հ ն ա ղ ո յ ն է ը ս տ  
հ ա մ և մ ա տ ա կ ա ն լ է զ ու լ ը զ ի տ ու լ է տ ն  
օ ը ի ն ա յ »: Պարպեցոյ Հատուէի այդ դրել վեր-  
նապիւն է՝ «Sur la langue des Armeniens po-  
lonais. Cracovie 1886.

Նոյն, փետրվարի համարում, տրված է նաև

սամբ էլ ֆրանսիացու խորամանկութիւնը յաճախ տանջում, մայրս են մեր առևտրականներին ֆրանսիացիք համարեա շարունակ հետեալ խաղն են խաղում բոլոր առևտուրում. առաջին անգամները բազմաթիւ քանի պուրջ առնում և ապա մի առ ժամանակ դատարում են: Երբ առևտրականները, առանց այլ ու ձախ նայելու, անպիտան պահանջ են նախատեսում և մեծ քանակութեամբ բերել տալով լցնում են շուկան: Մի առ ժամանակ դատարման մէջ մնալուց յետոյ, վերջապէս դադար վնասով հաղւ. թէ կարողանում են վաճառել: Այդ հետեղութեան, փոխադարձ թշնամական յարաբերութեան չհարձիւ բոլոր առևտուրը վնասը համարեա իւրզանչիւր տարի կրկնվում է, և չը նա՝ յած զրան ընդ ռուսացիներէն դարձնելու սովորութիւն չը կայ:—Նույն Մինասը առնում է, երբի նա մի բան գիտէ, որ առնում է, ևս էլ առնում. թէ կուզ վնասվում է, սխիտ առնեմ վճռում է և կրկնուր և սկսում կատարել կերպով ինքն էլ առնել: Որպէս զի անտեղի մրցութիւն տեղի չունենայ, որպէս զի չը վնասվին, և ուրիշներին վնասի պատճառ. չը դառնան, մի քանի տարի սրանից առաջ Նույնուր բոլոր առնող 3—4 առևտրականները իրար մէջ պայման են կապում, որ այլ ևս կամեալիք չը դրկեն բոլոր ժողովուրդ, այլ թողնեն, որ ոչխարատէրերը իրանք բերեն շուկայ և շուկայի գնով վաճառեն: Եւ այս հաւանական է, քանի որ ոչխարատէրերը որչափ ժամանակից յետոյ անկարող են ուշացնել, որովհետև ոչխարների հետ պիտի սար բարձրանան: Սակայն այդ պայմանը երկուր չէ շարունակվում, շուտով իր նշանակութիւնը կորցնում է, ըստ որում պայման կապողները մի երկուրը, չը նայելով իրանց կապած պայմանին, հայի յատուկ քանակութեամբ, ծածուկ մարդիկ են ուղարկում, որ իրանց համար բոլոր առանձին ժողովին... Որինակով կարելի է ցոյց տալ այդպիսի վարմուքի տեղի ունեցաւ մօտիկ անցեալում: Առաջ Նույնում ընդունված էր, որ առանց նախորդէն զինով որոշելու բոլորը կը ժողովին և ապա շուկայի գնով կը վաճառէին: Մի անգամ ապուլեցիները մի ընկերութեան աջողվել էր այդ պայմանով ժողովել 3000 պուրջ բուրջ: Մի ուրիշ առևտրական, նոյնպէս ապուլեցի, տեսնելով այդ ընկերութեան համարձակ քայլը, գիտութեամբ առնում է 500—600 պուրջ համարեա շուկայում ենթադրած գին կրկնապատիկը վճարելով. 4—5 ր. արժողութիւն ունեցող բոլորը վճարում է 7—8 ր., թէ է ինքը, բայի վնասից, ուրիշ շահ չէ ունենում. սակայն բաւականացած է լինում, երբ ընկերու-

թեանը անագին վնաս է պատճառում: (Գեղերութիւնը այդ տարի վնասվում է մինչև 10—15000 բուրջ: Թշնամական յարաբերութեան, անմիա մրցութեան հետ կապված կեղծութեան և խարդախութեան վրա օրից օր երևան են գալիս նորանոր խարդախ միջոցներ. այսօր Նույնուր բոլոր Մարսելում համարեա կորցրել է իր նշանակութիւնը: Մեր առևտրականներն էլ այդ բանը ծածկելու և աննկատելի անելու դիտաւորութեամբ, ահա երկրորդ տարին է, որ Նույնուր բոլոր նախ ուղարկում են թիֆլիս, ապա այդտեղից, թիֆլիսի անունով ուղարկում Մարսել:—Շատ չի քաշել, անկասկած, թիֆլիսի անուն էլ, այս դէպքում պիտի փչացնեն:

ՆԱՄԱԿ ԽՊԲԱՊԻՆ

Գանձակ, մարտի 11-ին

Ձեր պատուական լրագրի № 7-ի մէջ Գանձակի նամակագիրը նկարագրելով Մ. Նարայանցի 100 բուրջու նուիրատութեան տարօրինակ ձևը, յօդուտ տեղի ունեցող զինուորային աղքատ ուսանողներին և մի նայեցող գրեթէ 1879 թվականի սովի առիթով կազմված ցորենի առևտուրի կոմիտեի գործունէութեան վրա, անցնում է կոմիտեի գործընդունող հաշվապահների վերջնական գերիշխանութեան: Պարզեա համարում այ. նամակագրի մի քանի սխալները ուղղել:

Նախ ցորենի կոմիտեի ոչ թէ 80% է վերաբարձրել փող տուող հասարակութեանը, այլ մօտ 86%, այն է իւրբանչիւր 100 բուրջում 85 ր. 68 կոպ., բայց թէ ինչ տեղ է մնացել մնացող թիւով 93 հողի են), այդ մասին սխալ է զիմնք կոմիտեի գործունէութիւնը ընտղ հաշվապահների գեղեցումը, որ կազմված է 29-ին յուշվարի 1881 ամի և օրի 4-րդ և 7-րդ յօդ. պարագայէ ցոյց են տալիս, որ դժբա մնում են կոմիտեի անդամները թիֆլիսում հայ ծախող ապ. Մ. Գ. Արամուսեանցի և Հալի-Բաղր-Հալի-Մուրա-Պուր-Սուր-Սուրի մօտ 270 բուրջի և ցորենի ամբարում

հայ ծախող Գրիգոր Մկրտումեանի (այժմ հանգուցեալ) և Հալի-Մահմուդ-Հալի-Ալի-Օղլիի մօտ 2,250 բուրջի 35 կ. ընդամենն 2,520 ր. 35 կոպ. Երկրորդ Մ. Նարայանցի թիւ հաշվապահների շարքում չէ եղել, այնու ամենայնիւ բոլոր մանրամասնութիւնները, ինչպէս Նարայանցին, նոյնպէս համարեա ամբողջ քաղաքին յայտնի է, որի մասին մինչև անգամ Վալալ լրագրում հրատարակած եմ 1883 թվի № 152-ի մէջ:

Երկրորդ այ. նամակագիրը կոմիտեի վրա կօմիտեի բոլոր անդամների շարքում ես ես ընկնում եմ պակասորդ 14% պատասխանատութեան տակ, այդ մասին ես առաջ եմ բերում հաշվապահների գեղեցումն 3-րդ յօդ. կօմիտեի գանձապահների դրամական և ցորենի մատենաները, մտաքնն և ձայնը ընդունել ուղիղ:

Գուցէ ընթերցողները երկբային թէ երբ դործը այսքան պարզ է, ինչպէս Նարայանցի այդպէս է վարվում ինձ հետ. կասեմ դա Նարայանցի կողմից անձնականութեան հաշիւ է, նա, ինչպէս ուրիշ անգամներում, նոյնպէս էլ այս անգամ, կամեցաւ 1879 թվի սովի ժամանակի իմ 1 1/2 տարվայ գործունէութեան վրա մի սև քող գցել, որի մանրամասնութեան նկարագրելով, եթէ համատարակեան կանոնից դուրս չը լինէր, ոչ թէ կը նկարագրէի լոյ խօսքերով, այլ դրաւոր փաստերով, մինչև անգամ վկայ ցոյց տալով Նիւսապետի արի-նա-համարակալութիւն:

Նարայանցի վարմուքը հասկանալու համար հարկաւոր է վերաբարձրել 1879 թվականի կազմված կոմիտեի կազմակերպութեանը, ուր ի միջի այլոց ընտրված էր և Նարայանցի հայրը (այժմ հանգուցեալ): Այդ մասին ես լուրջութեամբ տալով կը ցանկանայի, որ Մ. Նարայանցի, եթէ ունի քալիֆութեան, պատասխանէր հետեալ հարցին. երբ 1879 թվականում սովի ամենախիտ ժամանակում, քաղաքին ունեւոր դատակարար փող դնելով օգնում էր աղքատ կամ հայ չունեցող դատակարարին, ինչ էր պատճառ, որ նրանց հետ ի միասին Պետրոս Նարայանցի խոստացած դրամական օգնութիւնը յետագոյնց մինչև 1880 ամի սպրիլի 25, որ իր հօր մահից յետոյ տուել ինքը Մ. Նարայանցի և այն էլ այն ժամանակ, երբ սովի վտանգը դրկնէ: անցած էր, ըստ որում նոյն թվի յուլիսի 26-ին կոմիտեի վերաբարձրեց փողատէրերին ունեցած առձեռն պատրաստի դրամը 80%:

Ինչ վերաբերում է յարգելի նամակագրի այն մասին, որ ես օրինական ճանապարհով պէտք է վերջացնեմ իմ գործն Նարայանցի հետ, այդ մտադրութիւնը թողցելի, ըստ որում Նարայանցի-թիւն է, որով վարվում է ամսաթիւթը, ըստ տաճկանաց սովորութեան: Սակայն դա մեզ չէ վնասեցնում, ըստ որում այն Միաբանութիւնը, որի ղեկավարն ու ներկայացուցիչը (Տ. Այտընեան) բացարձակաբար իր քուէն տալիս է ի նպատակ ուսանողները տառապելու, պէտք է յուսալ թէ վաղ կամ ուշ կիրառործի «ժ ա մ ան ան կ ի պ ա հ ան ջ և ծ թ ի ո ղ ի ս ու ո մ ը»...

Գիւրմուքը արդէն արժանապա. հասարակութեան արձանագրութիւն:

Յակովբ Լիւիսիանց

ՆՈՐ-ՆԱՍԻՉԵՆԻԱՆՅ մեզ հարողում են, մարտի 8-ից, որ այդտեղ շարունակ անձրևներ են գալիս և փողոցներում ցեխ է կանգնած: Դօն դեռ առ անշարժ ստան է, թէպէտև Վճառը արդէն շարժվեց:

ՐՈՍՏՈՎ (Գօնի վրա) քաղաքից մեր թղթակիցը

մեզ գրում է. «Քաղաքագրուիս այ. Ա. Բայկով փետրվարի 27-ին վերադարձաւ արտասահմանից: Նա գնացել էր Փարիզ, որտեղ կայացաւ ժողով Վճառի և Գօնի միաբանութեան հարցի նախագիծը մշակելու վերաբերմամբ: Կազմված է ընկերութիւն 36 անձերից, որոնցից 18 հողի ֆրանսիացիք են, և 18 ուսու: Այդ ընկերութիւնը յանձն է առնում փոքր Վճառ-Գօնեան ներուց (КАНАЛЪ, ջրանցք): Գնա կայար Պետրոս մեծն էր, որ միտք էր յղացել փոքր այդ Վճառ-Գօնեան ջրանցքը, և արդէն ձեռնարկու էր եղել գործին, երբ Շիլդիայի հետ ուսանողի ունեցած պատերազմը յանկարծակի խոչըրոտ եղաւ դուրս բերելու մեծ կայսրի այդ նախագիծը: Այնուհետև 1802 թվին բարձր կամեցնահառուէն, Տաքանբոզի այն ժամանակի քաղաքագրու, առաջարկեց կառավարութեանը գուրս բերելու այդ ջրանցքը: Բայց, դժբաղդաբար, բարձր կամեցնահառուէն շուտով հեռացաւ պաշտօնից ու նախագիծը անկատար մնաց: Եւ ահա այժմ, երբ կառավարութիւնը կառուցանում է Նովորոսիսկի երկաթուղին և նաւահանգիստը, Բայկով վախճալով մի գուցէ թոտով քաղաքը ընկնի, կորցնի իր առաջվայ նըշանակութիւնը և աննշան քաղաք դառնայ, սկըսում է մշակել այլ և այլ նախագիծը քաղաքը բարեկերտ համար, ի միջի այլոց և Վճառ-Գօնեան ջրանցքի նախագիծը: Այդ դեռ 1884 թվին էր, այն ժամանակ թէ լրագիրները և թէ քաղաքացիք ծարուր էին Բայկովին, անիրադրոճելի համարելով նրա պրօբէկար, սակով որ Գօնը Վճառից բարձր դիրք ունի և Գօնի վուրը Վճառի մէջ կը վազել, այդպիսով ցամաքած Գօնը կատարելապէս կը ցամաքի: Բայց Բայկով յարթելով հազար ու մի արգելքներ, կազմում է ուսու-ֆրանսիական ընկերութիւնը վերոյիշեալ 36 անձերից, իւրբանչիւր անդամի 1000 բուրջի անդամացեալան վճարով: Եկան Ռուսաստան ֆրանսիացի հմուտ և յայտնի տեխնիկներ և ինձէներ-

բելգիացի պրօֆէսոր Ֆելիքս Նելի ծերունի գիտնականի նորբերումս հրատարակված Ք Ր ի ս ո օ ն և ա յ Հ ա յ ա ս ա ն և ի ր գ ր ա կ ա ն ու թ ի ւ ը (L'Armenie Chretienne et sa Littérature. Louvain (Belgique) 1886). «Արանչիլի մատենի» մասին, ինչպէս անուանում է նրան Հանդէսի յօդուածագիրը, մի յօդուած, որ վերջա՛նում է հետեալ տողերով. «Բովանդակ գրքին մէջ ընթերցողը կը տեսնէ քաջ տեղեկութիւն ազգային և օտարերկր հեղինակաց, որ հայոց վրա խօսած են, ծանր խորհողութիւն, անկողմնակալ դատաստան, և առանձինն սէր և հակամիտութիւն բաղձարիւն ծերունի հեղինակին առ ազգս հայոց»: Ֆելիքս Նելի, որ թղթակից-անդամ է Պետերբուրգի ակադէմիային, երկու ընտիր հեղինակութիւններ ևս ունի ֆրանսերէն լեզուով Ք ո վ մ ա ս Մ և ծ ո փ և ց և ո յ պատմութեան վրա:

Մի և նոյն համարում մնեք ծանօթանում ենք մի գեղեցիկ և սրտաշարժ բանաստեղծութեան հետ, Ա ր շ ա կ Ա ր ք ա յ վերնագրով, որը շարադրել է Վիլհելմայի կայսերական թանգարանի վերաստեսուչ Մ. Համբերդանց: Գերմանացի բանաստեղծը իր 31 տուն քերթուածի մէջ Արշակ Բ թագաւորին Անուշ բերդն ունեցած արեւալի վերջը կերպէ, հետեւում զայլ առ զայլ փառաստի Բիւրանդանցուց. (գիրք և. զլ. է. 5):

Մարտի համարից, ինչպէս հաստատ տեղեկացած ենք «Հանդէսի» մէջ կը սկսի հրատարակվի մի վերին աստիճանին կաւետը և հետաքրքրական յօդուած՝ այն է «Հ ա յ լ ր ա գ ր ու թ և ա ն պ ա մ ու թ ի ւ ը» որտեղ գիտնական հեղինակը պիտի խօսի 1, ընդհանրապէս լրագրութեան և նրա պատմութեան վրա, 2, հայ լրագրութեան արդիւնների և 3, նրա պատմութեան բաժանան և զանազան բաժինների վրա: Առաջին անգամն է, որ մեր մէջ լոյս կը տեսնէ մի այդ-

պիտի ընդարձակ և ընդհանուր տեսութիւն ընդհանուր հայ լրագրութեան սկզբից մինչև այսօր մեր մէջ երկցած պարբերական թերթերի վրա: Յարգելի հեղինակն ինքնին բաւական գրաւական է թէ այդ տեսութիւնը իր բաղձովիւ հետաքրքրական կողմերը պիտի ունենայ: Դա՛ Վեռլա քաղաքում «Ա ր մ ե ն ի ա » վերնագրով և հունգարերէն լեզուով հրատարակող հայոց օրգանի լամբարդապետը, Տ. Գրիգոր Վ. Գրիգորեանն է, միայն Վիլհելմայի Միլիթարեան ուխտով և ընդ Ունաբիլայի հայրից, երկուստարդ և համակրելի մատենագիր:

«Հանդէսի» առաջին համարից սկսած է տպագրվել «Գաւէտիլիա» վերնագրով մի գեղեցիկ պատմական նորակէպ, որի նիւթն առնված է ներկայ դարի սկզբներում, Նապոլէոն Ա-ի աշխարհակալական ձգտմանց դէմ, Սպանացուց իրանց հայրենիքը պաշտպանութեան համար մղած համադրային պատերազմի արկածներից:

«Հանդէսի» լամբարդիւնը ինչպէս հաստատ տեղեկացած ենք, առանձին ուղարկութիւն պիտի նուիրէ նաև իր անտեսական և արուեստադիտական բաժիններին, արձագանք ճանդիւսանալով և բոլորական անտեսական կատարելագործութեանց և յարմարեցնելով այդ բաժինները մեր ժողովրդական անտեսական պայմաններին:

«Հանդէսի» ունի և մի բաժին «Այլ և այլը», որ հարողում է զանազան հետաքրքրիչ նորութիւններ և ը ն տ ա ն և կ ա ն ա ն ս ե ո թ և ա ն մասին օգտակար խորատներ և դիւրակատար փորձեր:

Ամենից վերջը գալիս է մի համառօտ քաղաքական տեսութիւն, իւրբանչիւր ամայ նշանաւոր քաղաքական դէպքերի վրա և հանդէս է հանում ընդհանուր քաղաքականութեան ներկայ դրբը:

Մի նկատողութիւն, որ կարող ենք անել ոչ ի նպատակ «Հանդէսի»՝ դա նորա սխալ տառագրու-

թիւնն է, որով վարվում է ամսաթիւթը, ըստ տաճկանաց սովորութեան: Սակայն դա մեզ չէ վնասեցնում, ըստ որում այն Միաբանութիւնը, որի ղեկավարն ու ներկայացուցիչը (Տ. Այտընեան) բացարձակաբար իր քուէն տալիս է ի նպատակ ուսանողները տառապելու, պէտք է յուսալ թէ վաղ կամ ուշ կիրառործի «ժ ա մ ան ան կ ի պ ա հ ան ջ և ծ թ ի ո ղ ի ս ու ո մ ը»...

Միակ ամսաթիւթը, որ կարող է լինի աջօթիութիւն ունենալ մեր մէջ, թէ իր դիրքով, թէ խորագրիներով և աշխատակիցների ետանդուն և միահողի գործակցութեամբ և թէ վերջապէս իր ընտրած նպատակին ընտրելիութեամբ, — դա «Հանդէսն» է: Փոքր նշանակութիւն չունի մի թերթի աջողութեան համար նաև մաքուր թուրք լեզուի գեղեցիկ տպագրութիւնը: Ոչ մի տեղ, որ անդ հայոց տպարաններ կան, այնքան կոկիկ վայելուչ և ակնհասճոյ տպագրութիւն չը կայ, որպէս Վիլհելմայի Միլիթարեանց տպարանում: Ընթերցողը մեծ հաճութեամբ է բաց անում «Հանդէսի» էջերը և կարդում: Մայիս 1887 թ. 29

Ի նկատի ունենալով վերոյիշեալ պարագաները մնեք յոյս ունեւք, որ հայ հասարակութիւնը իր շօշափելի համակրութեամբ թէ աջողութեան պատճառ կը լինի «Հանդէսին» և թէ միանգամայն, որ նուազ կիրտը չէ, քաջալերութիւն կը տայ Վիլհելմայի Միլիթարեան միաբանութեան, որ նոյն իսկ մի օտար հոշակաւոր զիւնակալի վկայութեամբ «ա ն կ ա ս կ ա ծ ա ւ ւ լ ի ե ր ա խ ա ա զ ի տ ո լ թ և ա ն և յ ա ր գ ա ն ք ի է ա ր ժ ա ն ի» քան թէ ինչպէս կարծում են ուրիշները: Միակ հիմնարկութիւն, որ պատկառելի արարներ կատարելի, ստանց բարեպաշտ հարուստների օժանդակութեանց և առանց այս և այն կողմից կտակված թանկարկին կարուածներին և այլ

եկամոց արդիւններ, այլ միայն իր սեփական անողւ աշխատութեամբ և գնահատելի յարատև ջանքերով հաստատուն կերպով սքնում է յօդուտ ազգային դրականութեան, ան ի ս ի ր ազգային մանկուց դատարակութեան, այդ՛ վիլհելմայի Միլիթարեան միաբանութիւն է, որն իր ուղղութեամբ կանգնած է աւելի դրական, բեւալական սկզբանց վրա և դանդալ է գերմանական դրականութեան և դիտութեան արդեցութեան ներքե: Սրա համար գործունէութիւնն աւելի ուղիղ և աւելի շօշափելի արդիւնք առաջ է բերում և կը բերի քան այլ համանման վանքերի և ուսումնական հիմնարկութիւնների, որոնք ազգային կարուածների և մասնաւոր բարեբարներին ժառանգութեանց արդիւնքներով շատ հանդիստ կերպով կառավարվում ի ր ա ն ց ց ա ն կ ա ց ա ծ ժ ա ն ան ան կ ի օ գ ա ս կ ա լ և մ ա ն օ գ ա ն մ ի մի արդիւնք են ցոյց տալիս երբեմնապէս...

«Հանդէս Ամսօրեայի» տարեկան բաժանորդագրին է ճանապարհածախսով 9 ֆրանկ, որ ներկայ կուրտով անում է 4 բուրջ: Կէս տարեկանն է 5 ֆրանկ. 50 ամսու. առանձին համարները 1 ֆրանկ: Խմբագրութեան հասցէն է Redaction de la Revue Hantess, Vienne (Autriche), VII Mechitaristengasse, 4.

Ստանալ ցանկացողները կարող են դիմել ուղղակի լամբարդիւն, Վիլնուս, և մեզ, Багужь Аракелы Саруханьяну, ուղարկելով տարեկան կամ կէս տարեկան վճարը, կանխիկ:

Ի վերջոյ, կատարեալ աջողութիւն ենք ցանկանում «Հանդէսին» և յոյս աւանք թէ մեր ընթերցող հասարակութիւնը չի դանալ նրան իր աջակցութիւնը, որով և թերթն էլ հեռագետէ աւելի կընդարձակվի և միանգամայն կը կատարելագործվի:

նեղ, և այժմ ոչ ոք չէ կասկածում արդէն որ կարելի է միացնել Գօնը ՎՕՂԳայի հետ, որտեղ ներքինը միմեանցիկ շատ հեռու չեն գտնվում: Փարիզից Բազելի մինչև ձեռքով ընթացող ճանապարհը պարզ երևում է, որ ՎՕՂԳայի մակերևութի վարձը է Գօնի մակերևութից և ոչ ընդհակառակն: Փարիզի ժողովը որոշել է օրինաւոր կերպով պայմաններ կառուցել կառավարութեան հետ և անմիջապէս սկսել գործը: Այն ժամանակ Բոստոնի և Նոր-Կասկիջեան քաղաքները կը հարստանան և նրանց ապագան աւելի ապահոված կը լինի, քան թէ այժմ:

Մեզ ուղարկված է հետեւեալ նամակը: «Վերին-Ազոուից զէպի հիւսիս, մօտաւորապէս տասն և հինգ վերտ հեռաւորութեան վրա, հասնելու ձորակի մէջ գտնվում է ՅՂՆԱ զիւղը: Գիւղը բարեկացած է մօտաւորապէս 80 տուն զուտ հայ բնակիչներով, որոնց զլիւսաւոր պարագայում է այգիներով լինելը, երկրագործութիւնը, շերամապահութիւնը և առևտուրը: Այս զիւղի բնակիչները դաջվում են և կոլիասի ու Ռուսաստանի տեղեր, որտեղ պարագում են վաճառակաւորութեամբ: Յիւս գիւղի երիտասարդները քիչ չեն այլ և այլ համալսարաններում աւարտողներ: Նոյն իսկ զիւղում կայտաւիրաների թիւը քիչ չէ, սակայն տխուր երևոյթ է, որ մեր հարուստ և առաջնակարգ մարդիկ շատ ունեն սկսել մտածել աղքատ դասի որդեղ ուսումնաւոր Յայտնի որ շատ տեղերում զեռ և սեպտեմբեր ամիսը բազմի են ծխական դպրոցներ, իսկ մեզ մօտ երկար ու բարակ մտածելուց յետոյ, ներկայ թիւի յունար ամսին հազիւ է աղողում մեզ ընտրել հողաբարձուներ և ինքզին լքովածից դպրոցի բացման համար թողութիւն: Եւ միայն փետրվարի 15-ին կաթողիղոսի կոնգրէսը դպրոցի բացման համար ստացած լինելով, հողաբարձուները վերջապէս բաց արին դպրոցը: Ուսուցիչները հրաւիրված են և կանոնաւոր դասաւարտութիւնը սկսված է: Գարշոյը յաճատում են 60-ի չափ աշակերտներ, որոնք բացառապէս աղքատ դասակարգին են պատկանում: Գարշոյի մուտքը կազմում են աշակերտները ուսման վարձը և դասաւարտանձանց մասնաւոր նուէրները: Իսկ թէ եկեղեցին կը դրամագլխի տոկոսով պէտք է օգնի դպրոցին, այդ դեռ ևս հարց է: Հողաբարձութիւնը որ երեսներով առաջ է տանում իր ստանձանած պաշտօնը, մտադիր է եկող սեպտեմբեր ամիսը բանալ օրիորդաց դպրոցն էլ, որի համար շինութիւնը գրեթէ պատրաստ է: Մեր դպրոցի զգալի պակասութիւնը մանկական գրադարանի բացակայութիւնն է: Յուսով ենք, որ դպրոցի ղեկավարները այս կէտը առանց ուշադրութեան չը պիտի թողանան: Լրացրիչները դպրոցը առ այժմ ստանում է Վաշկը:» փետրվարի 12-ին ուսուցիչները տեղի թատերասէրներին մասնակցութեամբ ներկայացրին «Արշակ II» ողբերգութիւնը և «Բարեկամներ» կատակերգութիւնը, յօգուտ տեղիս դպրոցի: Ընդհանուր մուտքն էր 42 բուլբուլ Այցելուների թիւում, որ հարիւրից անցնում էր, կէսի չափ կանայք էին: Հասարակութիւնը շատ դժմանք ներկայացուցավ և ինքզին կրկին նրանք Ուսուցիչներին մին, պ. Աստանեանց, նկարիչ ներկայացման համար մի վարագոյր և մի դէկորացիա բնութեան տեսարանից:»

Ռուսաստանի նաւթի մրցութիւնը եւրօպական հրապարակների վրա ճնշելու համար, ամերիկական նաւթային առևտուրի զլիւսաւոր ընկերութիւնը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրիչները, ուղարկել է Վոյսոն իր ներկայացուցչին բանակցութիւններ սկսելու Բոաչիլի ֆիրմայի հետ: Նօրել եղբայրների նաւթային ընկերութեան բոլոր ակցիաները գնելու մասին:

ՌԱԳՈՒՅ մեզ գրում են. «Վարտի 10-ին անսայտ շարագործները, օգուտ քակելով զինչիկայ վատ եղանակից, կորստանալով այստեղի ուսաց մար-եկեղեցին, տանելով իրանց հետ 600 բուլբուլ: Զարագործներից մէկը, որ ուսու է, ձերբակալված է երկաթուղու կայարանում: Կարծում են, որ միւսները թուրքեր են, որոնք զեռ չեն գտնված: Զարմանալին այն է, որ այդ գողութիւնը կատարվել է եկեղեցական և բանտի պահապան-ղինտուր-ներից ոչ հեռու, բայց զոցանից և ոչ մէկը ոչինչ չէ իմացել:»

Մեզ գրում են ՌԱԳՈՒՅ, «Վարտի 10-ին, բայց րամի տօնի օրը, մի քանի սիրողներ թուրքերին

ընդունով մի ներկայացում սուեցին Թագինով թատրոնում, յօգուտ մի թուրք ուսանողի: Սաղա-ցին «Վարտի արկածը» 5 գործողութեամբ կամեղան, հեղինակութիւն Միլոզ-Ֆատ-Ալի Ախու-րով: Թատրոնը գրեթէ լի էր, և մեծ մասամբ թուրքերով: Կային և շատ հայեր և օտարազգի-ներ, ներկայ էր և պարսից հիւպատոսը: Մտաքը մօտ 400 բուլբուլ է հասնում: Սրախուսկիւով այս ներկայացումից, սիրողները ուղում են ամիսը մի անգամ թուրքերին ներկայացում տալ: Յանկա-նում ենք կատարեալ աղողութիւն:»

ՌԱԳՈՒՅ մեզ գրում են մարտի 10-ից. «Մե-ցեաներին ձեռ հաղորդել էի, որ նոր կարգա-դրութեան դրութեամբ, այսուհետև արգելում է առանց օրինաւոր վկայականի ընդունել նաւագե-տի պաշտօնը տեղիս նաւերի վրա: Այդ կարգա-դրութիւնը թէ է նաւատերերին էլ վաղուց յայտնի էր և ուրեմն նրանք էլ պիտի շտապէին վաղորդ ալը մասին մտածել, վարձելով այնպիսիներին, որոնք կարող լինէին ընդունվել կառավարութեան կողմից, բայց նրանք անուշադրութեան տալով յի-տանգել էին մինչև օրս: Այժմ, երբ այդ կարգա-դրութիւնը յանկարծ վրա է հասնում և այն էլ այն ժամանակ, երբ մի քանի օրից պիտի սկսվի նաւագնացութիւնը, նաւատերերը չը զիտեն ինչ ա-նել և մնացել են կատարելապէս շուարված: Հիմա վկայական ունեցող նաւագետները շատ քիչ են գտնվում այստեղ, երաճներն էլ շատ մեծ ուժեղ-ներ են պահանջում: Իսկ թուրքերը կամենում են որ համ էժան լինի, համ էլ իրանց մարդը լինի և ահա փորձում են միշտ փախուստ տալ յիշեալ կարգադրութիւնից դանաղան միջոցներով, այդպէս օրինակ, վարձում են թուրք-և այլազգի նաւա-պետներ, ի հարկէ չափաւոր ուժեղով, որոնցից երկրորդը տիրոջ հետ պայման կապելով, խոստա-նում է ծովը մտնելու պէս իրաւունքները յանձ-նել թուրքին, դառնալով վերջինիս օրինակներ: Բայց այդ ևս նկատել են և աշխատում են դրա առաջն առնել: Գտնվելով այսպիսի անել գրու-թեան մէջ նրանք զիմեցին պ. նահանգապետին, ինչպէս իրանից, որ թող տրվի նաւագետներին մի առ ժամանակ ևս չարժանակել վարել իրանց պաշտօնը: Բայց ստացան պ. նահանգապետից մերժողական պատասխան: Գրանից յետոյ նրանք բարձրաթիւ ստորագրութեամբ հեռագրեցին Պե-տերբուրգ պ. մինիստրին, ինչպէս թիւրքու-թիւն: Պատասխան զեռ չեն ստացել:»

ՂՈՒԲԱՅ մեզ գրում են որ այդ քաղաքում վերջապէս բացվել է դրագարանը 25 անդամե-րով, տարեկան 5 բուլբուլ անդամական վճարով: Գրագարանում ստացվում են 7 հատ լրագիրներ: Գրագարանի համար դանաղան պիտուքներ առնե-լու վրա զործ դրած դուրմար ծածկելու համար Զատիկից յետոյ դիտարարութիւն կայ մի թատրո-նական ներկայացումն ապա: Գրագարանում ստա-ցվում են մի քանի տեղերից, օրինակ Բագուից-գրքերի և լրագրիչների նուէրներ:

Մարտի 9-ին, ինչպէս մեզ գրում են ՂՈՒԲԱ-ՅՈՒ, թուրքերի նօրուղ բայր ար մի աօնի պատ-ճառով այտուրի ձիարչաւ եղաւ Մի գիւղացի ստացաւ 25 բուլբուլ պարգև ձիարչաւ յաղթանա-կը տանելու համար:

Շիրակ դաւառի Նախիջևան զիւղից մեզ գր-ւում են: «Այս օրերս մեր զիւղացի մի երիտա-սարդ Մ. աղքատունով, սպանված գտնվեցաւ իր քաւորի տանը: Երան սպանեցին քնած ժամա-նակ: Գործը յանձնված է քննչին: Ասում են որ մի քանի կասկածաւոր անձինք արդէն բռնված են:»

«Тифл. Лист.» լրագիրը հաղորդում է որ մեր երաժիշտ Գորգանեանի եղբայրը, որը մի քանի տարի է արդէն վօրձուեժ քաղաքի թատրոնում երգում էր օպերեաներում Տէրսի կեղծ անու-նով, այս օրերս հիւանդանալով թուրքի բորբո-քովուց, վաղեմակեցաւ վօրձուեժում:

Մենք լսում ենք որ թիճալիս հասել է տիկին Խահահահանց, որ բժշկական ուսում է ստալուց Պետերբուրգում: Տիկինը առաջին հա-յուշի է, որ ստացել է կին-բժշկի ուսումնական աստիճանը: Ինչպէս լսում ենք տիկին Խահահահանց զիտարուելով պարագլուտ:

Մարտի 13-ին կողիտեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովում Մօսկույի «Վալիկ Մօրօզով» առևտրական տան յանձնարա-րութեամբ Անդրկովկասի բամբակագործութիւնը ուսումնասիրող պ. Յարատիով կարգաց մի դե-կուչում բամբակի մշակութեան մասին Միացեալ Նահանգներում և Անդրկովկասում: Նիստը շատ բարձրանալ էր: Ընդհանուր ժողովը վճուեց, որ պէտք է ն ուրից ինչպէս կառավարութեանը, որ միջոցներ տայ կրեանի նահանգում բամբակի մշակութեան օրինակելի կայարան հիմնելու և պլանտացիաներ դարգացնելու: Անդրկովկասի բամ-բակագործութեան վերաբերութեամբ ուշադրու-թեան արժանի կէտերը կը հաղորդենք միւս անգամ:

ԵՐԵՎԱՆՈՒՅ մեզ գրում են, որ այդտեղի թեմա-կան դպրանոցում արժանաւոր կերպով տօնիցաւ վարչաանաց տօնը: Հանդիսին ներկայ էր մեծ բազմութիւն:

Վերակի, մարտի 15-ին, թիֆլիսում կուկիայի կաթիլի եկեղեցում, պատարագից յետոյ կատար-վեցաւ հոգեհանգիստ լինացի յայտնի գրող Յովսէփ Խիչատիս Կրաչևսկու համար, որ մուռ է այս ամսի 7/19-ին: Հոգեհանգիստին ներկայ էր զանա-զան աղղութիւններին պատկանող ահալին բաղ-մունքով և հանդուցեալ մեծապիւր ծաղկապարզ պատկերով:

Վերակի, մարտի 15-ին, թիֆլիսի կաթիլի եկեղեցում կատարվեցաւ թիֆլիսի բնակական դպրոցի նախկին ղրիւկտօր Յովսէփ Պէնչիսկու հոգեհանգիստը: Նորա նախկին աշակերտների նա-խաձեռնութեամբ: Հոգեհանգիստին ներկայ էր մեծ բազմութիւն և, ի միջի այլոց, Բարձր Նիկողայ, զինարական դպրոցի ղրիւկտօր զինակալ Օտտօ-գօրսկի, քաղաքային ձայնատրներից շատերը, քաղաքային վիճակագրի, Գիւղատնտեսական ընկերութեան անդամները, բնակական դպրոցի ու-սուցիչները և շատ ուրիշները: Հանդուցեալի նախ-կին աշակերտները ղիակալի վրա դրեցին մի սլը-սակ:

Երէկ, մարտի 15-ին, վաղեմակեցաւ Թիճալի-ՍՈՒՍՈՒՄ մի հայ քահանայ, որ յայտնի էր ամբողջ թիֆլիսի ոչ թէ միայն հայ, բայց և օտարազգիներ-ը շրջանները մէջ: Այդ պատկառելի անձնաւոր-ութիւնը Յ Ո Վ Տ ա ն ն է ս աւազ քահանայ Սարգսեանն է, որ քահանայ էր Վանքի մայր-եկե-ղեցում: Իր կապելը և իր ղիւքը չնորով (նա պատկած էր Բէկիթարէիով իշխանուհու հետ) նոյն-պէս և իր անձնական արժանաւորութիւնները չնորով, հանդուցեալ ունէր թիֆլիսում ամենա-ընդարձակ ծովս, մեծ մասամբ քաղաքիս հայոց բարձր դասակարգի, արիտօսկրատիայի մէջ: Հան-գուցեալը արդէն 50 տարեց աւելի էր վա-րում քահանայական պաշտօնը և դեռ նորե-րում տօնիցաւ նրա քահանայական գործու-նեւթեան յիմնաւեալը, որի աւելում հան-գանակեցաւ մի դուրմար, որով ինչպէս լը-սում ենք, պէտք է պահել մի որեղործի հայոց դպրոցներից միում: Հանդուցեալը շատ սիրված էր թիֆլիսի հայոց հասարակութիւնից, ամենից յարգված էր և մեծ ժողովրդականութիւն ունէր տեղիս հայոց հասարակութեան մէջ, որի ապա-ցոյցն էր այն պաշտպանութիւնը որ ցոյց տուց հանդուցեալին հայոց հասարակութիւնը և մասնա-ւը երբ նախկին կաթողիկոսի օրով Յովսէփեան սաւաղ քահանայ, Սինօղի կարգադրութեամբ, մի ամբողջ տարով ղրիւկեցաւ քահանայագործութիւ-նից:

«Русск. Медицина» լրագիրը լսել է որ առանձին մասնագործը, որ կարելի է Պետեր-բուրգում կանանց բժշկական կուրսերի հարցը մշակելու համար, աւարտող իր պարագայում երբ և այս օրերս կը ներկայացնի բժշկական խորհր-դին մի ծրագիր կանանց բժշկական բարձրագոյն առանձին ինստիտուտ հիմնելու համար:

«Сибирский Вестник» հաղորդում է որ Սի-բիրի համալսարանը այս տարի անսպասուա կը բացվի և կունենայ երկու ֆակուլտետ՝ բժշկականը և ֆիզիկո-մաթեմատիկանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս երևում է թէ Բերլինից և թէ Փա-րիզից եկած տեղեկութիւններից իշխան Բիսմարկ առանձին ցանկութիւն է ունեցել դրաւելու լըւէ-ստին, որը Փարիզ վերադառնալով յայտնել է որ Բիսմարկ իշխանը իր վրա շատ զեղեցիկ տպաւոր-ութիւն թողեց: Իշխան Բիսմարկ անհարկ է իր իստացութեան մէջ որ կըրաս-լօթարիւղան Գերմանիային միանալու գործի մէջ մտադար է զինարական կուսակցութիւնը: Չէ կարելի չը նկատել որ այդ միտքը ճիշտ չէ,—եթէ յիշա-ւի Բիսմարկ թող է տուել իրան այդպիսի մի միտք յայտնելու,—որովհետև կըրաս-լօթարին-գիւն Գերմանիայի հետ միացնելու հարցը վրա ամենից շատ պնդում էր նոյն ինքն Բիսմարկ: Առանձին նշանակութիւն էլ չը պէտք է ունե-նան ֆրանսիական օպտիմիստների համար Բիս-մարկի այն խօսքերը, թէ Գերմանիան այն ժա-մանակ կը պատերազմի, երբ նրա վրա կը յար-ձակվեն,—և այդ շատ հասկանալի պատճառով, շատ անգամ պատերազմը սկսելու մէջ մտադար այն երկրը չէ, որը սկսում է, որը առաջին ան-գամ յարձակում է գործում: Շատ անգամ հակա-ռակ կողմը, թէ և ինքը չէ սկսում պատերազմը, բայց այնպիսի միջոցներ է դիմում, որ ստիպում է թշնամուն անպատճառ սկսել պատերազմը, այսպէս պատահեցաւ 1866 և 1870 թականնե-րին: Իշխան Բիսմարկ իր քաղաքականութեամբ այդ-պիսի առիթներ շատ է տուել, և հէնց այժմ էլ, նա է որ առիթներ է յարուցանում պատերազմ սկսելու համար:

—Փարիզի լրագիրները հաղորդում են, որ Վիեննայ կայսրը խօսելով լըւէպի հետ ի միջի այլոց ասեց հետեւեալը. «Ես պատերազմի թշնամի եմ. ևս չեմ կամենում պատերազմ տեսնել:»

—Թիւրքաց դրաքննական զլիւսաւոր վարչութիւ-նը ուղարկեց Պօլսում հրատարակվող բոլոր լրա-գրների խմբագրութիւններին հետեւեալ շրջաբերա-կանը. «Ի նկատի ունենալով այն անհիմն լուրերը, որոնք հրատարակվեցան բոլորապէս անցքերի մասին, բարձրագոյն կարգադրութեամբ արգել-վում է տպել որ և իցէ լուր՝ Բօլղարիայի վերա-բերութեամբ:»

—Փարիզի մի քանի լրագիրներ այն կարծիքի են, որ ֆրանսիական կառավարութիւնը մեծ սը-խալ է արել լըւէպին Բերլին ուղարկելով: Մին-չև անգամ Փարիզից հեռաբերում են Բերլինի մի յայտնի ուղղութեան լրագիրներին, որ հանրա-պետութեան միխտորութիւնը ցանկութիւն ունի յանդիմանութիւն անը Բերլինի ֆրանսիական դեսպան Հերբետին: Լըւէպի այդ ճանապար-հորդութեան առիթով:

—Բերլինից հեռաբերում են, որ մտադրութիւն կայ էլըաս-լօթարինի միացնել Պրուսայի հետ. այդ նահանգները մինչև այժմ ընդհանուր-պետական երկիր էին համարվում:

ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինի մի առանձնաբոյժ նորերում սպեց հե-տեւեալ յայտարարութիւնը «Վիլհէլմ կայսրի ծը-նողեան ինստիտուտայ տարեգործը յարգելու համար, մարտի 22-ին ձրի կընդունեմ քաւոր հիւանդների» առանձին հանկուտ Գնելու հա-մար:»

Լիֆլանդիայի նահանգում, Կրաքինսօքում, այս օրերս մի ջահիլ կին ծնեց երկու աղջիկ, որոնց կուրծքը կպած էր միմեանց. նորածինները միւս մասերը բոլորովին կանոնաւոր էին: Այդ երկու-րեակները ծնվելու պէս մեռան, և ուղարկվեցան Գօրպատի բժշկական ֆակուլտետին:

Միացեալ-Նահանգներում հրատարակված վեր-ջին ստատիստիկական տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ պետական ծառայողների մէջ կա-նանց թիւը հասնում է 96,000-ի:

Սերբիայում այժմ շատ են խօսում մի պիկեսայի մասին, որը չուտով պէտք է ներկայացվի: Այդ պիկեսայի մէջ դուրս են բերված զանազան քաղա-քական կուսակցութիւնների և պետական գործիչ-ների Պիկեսայի հոլինակը ցոյց է տալիս թէ ինչ-պէս Սերբիայի թագաւորը իր քաղաքական խո-րագրութեամբ զէպի ար մաս հո Վ Տ թ ի շ է տանում իր ժողովուրդը: Պնդում են, որ պիկեսայի հեղինակը ինքը Միլան թագաւորն է, որ անա կրկու տարի է պատրաստում է այդ պիկեսան: Կարծում են որ այդ պիկեսայի ներկայացումը մեծ ազդու կը հանի, մասնաւոր ընդլիմադրականու-րի մէջ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՄՆԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ, 13 մարտի Բողոքաբերութեամբ յանձն է առնել ճանապարհորդելու Բողոքարկայում իսկապէս այն նպատակով, որ կարգաւարտի ամբողջ երկրում հայրենասիրական մասնաժողովներ, երկրի մէջ այժմ գոյութիւն ունեցող կառավարութեան կարգը պահպանելու համար:

ԲԵՐԼԻՆ, 13 մարտի: Հիւսիսային գերմանական լրագիրը, արտասովորով «France» լրագրի մէջ տպւած 10/22 մարտի աւելիով գրված գերմանական ու Վիլհելմ կայսրին վերաբերող յօդուածի վերջին տողերը, նկատուած է հետեւեալը: «Մենք մերկայանում ենք այդ անասօթ յարձակումները, որպէս զի մի օր կարողանանք ապացուցանել թէ որքան հանգստութեամբ և համբերութեամբ գերմանիան ամբողջ տարիներ էր տանում Ֆրանսիացիներին կողմից իր դէմ ուղղած յանդուգն վերադարձներն ու յարձակումները»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի: Մոլդաւի վարչութեանը տուած հրամանագրով անհրաժեշտ է ճանաչված, որպէս զի ականակիր նաւերը միշտ պատերազմական պատրաստութեան մէջ գտնվին, կազմակերպել այդ նաւերից իւրաքանչիւրի համար մշտական զօրախմբեր: Բայտեան ծովում գտնվող 87 ականակիր նաւերից 45 նաւերի համար այժմ արդէն նշանակվում է մշտական զօրախումբ որոշ քանակութեամբ:

ՓԱՐԻՋ, 14 մտաբեր: Սենատը հաստատութիւն տուեց պատգամաւորներին ժողովից արդէն ընդունված օրինագծերի ներմուծվող հացահատիկների վրա դրվելու քաղաքացի մարտասուղբի վերաբերմամբ:

ՍՕՖԻԱ, 14 մարտի: Յանկովականները յայտնեցին Ռիդաբէյին, որ ցանկանում են նրա հետ յարաբերութիւններ ունենալ միմիայն որպէս Ռ. Գրան ներկայացուցչի հետ, բայց ոչ թէ որպէս ինքնակառավարութեան ձգտումների կողմնակիցի հետ, և որ եթէ իրանց կուսակցութիւնը յաղթող կը հանդիսանայ, նա վաւերական չի համարի այն փոխառութիւնը որ արել են ինքնակառավարները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի: Լրագիրները հաղորդում են, որ այն յանձնաժողովը, որ կազմուած էր կայսրութեան հետ տեղերում քաղաքացիական ծառայութեան առանձին արտօնութիւնների կանոնների նախագիծը, արդէն վերջացրել է իր պարագրաֆները:

ՓԱՐԻՋ, 15 մարտի: Պատգամաւորների ժողովը բարձրացրեց ներմուծութեան մարտահարկը՝ եղանակից՝ 25-ից մինչև 38, կովերից՝ 12-ից մինչև 20, հորթերից՝ 4-ից մինչև 8, ոչխարներից և մաքրիներից՝ 3-ից մինչև 5, և 100 կիլոգրամ թարմ մսից՝ 7-ից մինչև 12 ֆրանկ:

ԲՈՒՆՈՒՐԵՍ, 15 մարտի: Լուրերին նայելով, Պեննինգտոն, Վիլհելմուս, նոյնպէս և Կոպրիվիցում, Արևելեան-Գոմիլայում, ապստամբութիւն ծագեց ինքնակառավարութեան դէմ:

ԲՕՒԲԷՅ, 15 մարտի: ԲՅէյտերի գործակալութեան հետագիւրը ինչպէս երևում է տեղական աղբիւրներից ծագած տեղեկութիւններից, որոնք հիմնված են Հերառի նահանգապետի հաւաստի լուրերի վրա, Թուրքիստանի գիւնդալ-նահանգապետը հրամայել է իսկանդէր-խանին, 12,000 մարդու զուգու անցած, վերցնել յանկարծակի Հերառտի Ազանիստանի էմիրը հրամանագրեց շուտաւարով կիրպով զօրացնել Հերառի բերդապահ զօրը 10,000 մարդով: Հանգամանքները ՚ի նկատի ունենալով Ազանիստանի էմիրը պահանջեց Սաիդ-էմիրի, սուլթանի աներոջ, և էմիր-Բաշի, Կոպրիստանի նախկին ղեկավարի, ղեկատուանը դատաւանութեան համար, էմիր-խանի հետ նրանց ունեցած զբաղրութեան պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ Մարտի 13-ին Ռուսաց 1 բուրլ 1 ժողովի վրա արժէ 219/32 պէնս, Համբարդի վրա — 181 պֆ.

Table with multiple columns containing financial data, interest rates, and exchange rates. Includes entries like 'Վարկի վրա', 'Սահմանափակ կուսակցություն', 'Արժույթի դիվիզիոններ', 'Պեննինգտոնի 5% փոխառութիւն', 'Ներքին 5% արտաքին փոխառութիւն', '5 1/2% բէնտա', 'Ռուսաց բէնտա', 'Նոր կոնսոլիդացիոն փոխառութիւն', '5% գրաւական թղթեր կալուած', 'Փոխ. կրեդ. ընկ.', '5 1/2% գրաւական թղթեր խնրածի կալուած, բանկի.', '6% գրաւակ. թղթ. խարիզի կայ. բան.', 'Պոլտավայի', 'Պետ. Տուրքի.', 'Կիւնի', 'Մոսկուայի', 'Բեսարաբ. Տուրք.', 'Նի. Սամար.', 'Վիլնայի', 'Թիֆլիսի—27 և 43 ա.', 'Բուխարայի—18 և 43 ա.', 'Վ. օլտիո-կամսի բանկի ակցիաները 582', 'Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.', 'Ռիբինսկ-Վ. օլտիո ընկ.', 'Ս. Պետերբուրգի քաղաքային օբլ. գաղութներ.', 'Մոսկուայի քաղաք. օբլ. գաղութներ.', 'Օդէսայի', 'Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.', 'Նոր երկաթուղային բէնտա', 'Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը', 'Գրաւ. թղթ. Ալիւ. բանկի', 'Ս. Պետերբուրգի բորսայի արամաղորդութիւնը', 'Ֆոնդերի վերաբերմամբ բաւական ամուր է:'

ՊԵՏԱՍԻԱՆՆԵՐ

ՄԱՐՍԷՅ. Կ. Մ. Գուր դրվել էր «Մշակին» կէս տարով և մինչ անցանք արդէն ձեռքանց 6 բուրլի, բայց մի և նոյն ժամանակ «Մշակի» մեր ուղարկված այս տարվայ համարները յետ կնք ստացել հետեւալ փոստային մակաղորդութեամբ: «A Marseille incomu»: Ռեբեն իմաց տուեցեք թէ մրտեղ պէտք է զրկենք համարները:

ՕԴԵՍՍԱ. Տիկին Գ. Մ. Գաղաբերցը էլինք ձեռք «Մշակի» համարների զրկելը մինչև ձեռքանց նոր կարգադրութիւն ստացանք:

ԱՆՍՏԻՍՏԱ. Իրաւատու. Շարունակեցէք թղթակցել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յար. Ղար. Ձեր յայտարարութիւնը չենք կարող ապագրել: Խնդրում ենք հաղորդեցէք մեզ ձեր հացէն, որպէս զի կարողանանք ձեռք ձեր դարձնել յայտարարութեան տպագրութեան համար ձեր ուղարկած 50 կօպէկի փոստային մարկաները:

ԻԳՂԻՐ. Բ. Մ. Շարունակել ենք որ դուք մեզ դաս էք կարգում թէ ինչպէս պէտք է լուրագրները մեր թերթը և ինչ ձեռով պէտք է քաղենք լուրերը:

ՆՈՒԻՒ. Հիւր. Ձեր հերթումը չի տպվել: Բաւական է այդ տեսակ աննշան բանի համար այսքան գրել:

ԻԳՂԻՐ. Ա. Ա. Մենք նոյնութեամբ քաղցնելը լուրը, ինչպէս և դուք գրած էիք առաջին անգամ և ոչ թէ երկրորդ անգամ, մի քանի մանրամասնութիւններ միայն բաց թողնելով: Թէ ինչ պատճառով այդ արեցինք, այդ ձեռք բացատրել չենք կարող:

ՂԱՐԱՍՈՒԲԱՋԱՐ. Երկու պարոններին: Շատ և շատ նորահալ ենք, որ մեզ ուղարկեցիք յայտնի տեսակի անձանց մի քանի բնագիւր նամակներ: Մենք ամեն բան կարող էինք կարծել, բայց այդ տեսակ բան չէինք էլ երևակայում: Կրանք շատ հետաքրքիր զօրումներն են: Մեզ խոստացան նոյնանուն նամակներ ուղարկել և ուրիշ հայախոսակ տեղերից: Փոքր առ. փոքր կը հաւաքենք:

ԳԻՐԲԷՆՏ. Օր. Մ. Մ. Ձեռք յիշում այդ ինչ լուր էր:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻՆ

ԵՂԲԱՐՅ ԾՕՎ ԻՆՏՕՎ ՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ (Սիօնի փողոց, քարվանսարայ Անասովի) Վաճառում է և գնում է տոկոսաբեր թղթեր և փոխ է տալիս նոցա գրաւականով (ԽԱՂԱՏՈՄՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՆՉԵՒ 210 ՐՈՒԲԼԻ): Փոխադրութիւններ է անում ՄՕՍԿՎԱ, ՕՂԵՍՍԱ, ԲԱԳՈՒ, ԲԱՔՈՒՄ և արտասահմանների զանազան քաղաքներ:

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒՂԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ (GIRONDE) Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ճիւղը:



Գինը զօրակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատաս՝ արկղիկը 2 ֆրանկ: Հիմնադրութիւնը դրուելու ունի 1804 թվից. Կլուսար ազնա SEGUIN, Բորդո (Ֆրանսիա). ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախում է պ. Բերլինցի մագաղանում և պարֆիւմերների ուրիշ մագաղաններում: 5—48 (Կ. շ.)

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

Advertisement for Bruckar and Co. featuring a decorative border and text: 'Խնդրում ենք յարգելի հասարակութեանը առնելով մեր ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆ և մեր հարած ԾԱՂԱԿԱՀՈՏ Օ-ԴԸ-ԿՈՒՐՆ գլուշանալ կեղծումները և նմանողութիւնները' 7—12 (Ե) C. M. 1678 ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԵՇԿԱԿԱՆ ԲԱՃՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՆ ՀՆԻԿԱԿԱՆ ՄԿՆԴԵԸ

Advertisement for 'ВЕРНАЯ СМЕРТЬ' (Faithful Death) featuring an illustration of a bear and text: 'ՄԵՆ ԵՒ ՓՈՔԻ ՄԿՆԵՐԸ կատարելագույն ոչնչացնելու համար Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/2 արժէ 60 կ.: Հեղուկ բաղաձուլն ընկերի գէմ: Սրտակի գինը, մրձխում միտակին 1 բուրլի: Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Գոլիւսար պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գ. րի վնակի դեղատան ապրանքների մագաղանում, Վլոնդոն հիւրանոցի տակ, Չուբարովի տանը: 33—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами в Тифлисе (Графская ул., против Музея). ԲԱՐՁՐԱԳՈՐՆ ՀԱՍՏԱԿԱՆ ԿՈՂԱԿԱՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՍԱՆ ԱՊԱՆԻՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆական փողոց, Մուզէյի դիմաց): Ստացված է Մալց-Կատարի և հայկ համար կոնֆեկտներ՝ «Մի հաղիք»: Ձկան իմ մարքած և ոչ-մարքած. Պրոլանի ձէթ, քաղախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԺԵՐԻ ԱՄԵՆԻ ԱՆԳՂԻԿԱԿԱՆ ՕՍՒԱՅ, լեղակի փոշիով և գունատերով. բծեր հանելու դեղեր, կոշիկների և վերջինի կոշիկների համար. սամալարը և առհասարակ մետաղեայ դորմիտները սրբելու իւղ և փոշի: ԾՎԵԿԱԿԱՆ ԳՐԵՏՍԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԿԻ, և անտեսութեան ուրիշ պարագաները: Լճագիլ թխանու բաղաձուլ. Թխանու կրէմ. Լիւսուրի և Լեղալուսի կօսմեալի կան սրբիչներ, երկու մարթու թարմութիւնը պահպանելու համար: Վիտամինի Լեղալուսի մագաղան պնդացնելու համար: Գերատան ապրանքների վաճառման կողմնակից ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒՆ նրա բաժանմունքում:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ե Ն Ն Ե Ր

ՆՈՐ ԳԻՐԻՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵՂՈՒՈՎ) ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆԲԸ ՀԻՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 զրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի գրապատճառանոցներում: 10 անկի առնողներին 20% շեջումն կը լինի Կենտրոնական գրապատճառանոցում: 23—30